ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

«----» մարտի 2012թ. **N-----Ն**

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 18–Ի N 37-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 5-րդ մասով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի նոյեմբերի 18-ի «Երևան քաղաքի վարչական շրջանների ղեկավարներին լիազորություններ պատվիրակելու և արտաքին գովազդի տեղաբաշխման /տեղադրման/ համայնքային կանոնները հաստատելու մասին» N37-Ն որոշման մեջ կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունները՝

1. Որոշման 2-րդ կետով հաստատված հավելվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 11.1-րդ կետով.

«11.1. Մեկից ավելի վարչական շրջաններում գովազդային գործունեություն իրականացնող գովազդակիրներն ուրվանկարների և համապատասխան փորձաքննության մոնտաժային նախագծերի համաձայնեցման համար մինչև սույն կանոնների 11-րդ կետով սահմանված կարգով համապատասխան վարչական շրջան դիմում ներկայացնելը կարող են դիմել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի արտաքին ձևավորման և գովազդի վարչություն՝ ներկայացնելով գովազդային ուրվանկարների փաթեթները կամ գովազդային միջոցների նախագծերը։ Ներկայացվող դիմումում պետք է նշվեն գովազդի տեղադիրը /հասցե/ ըստ վարչական շրջանների, արտաքին չափերը, մակերեսը և տեղադրման ժամանակացույցը։»։

2. Որոշման 2-րդ կետով հաստատված հավելվածի 15-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերությամբ.

«Գովազդի ընթացիկ տեղադիրի փոփոխման պարագայում կազմակերպությունը պարտավոր է դրա մասին նախապես՝ առնվազն 3 աշխատանքային օր առաջ գրավոր տեղեկացնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի արտաքին ձևավորման և գովազդի վարչությանը։»։

3. Հավելվածի 33–րդ կետի 4-րդ ենթակետը շարադրել հետևյալ բովանդակությամբ.

«Երևան քաղաքի վարչական սահմաններում գտնվող փողոցներում կրկնաձիգ գրաժապավենների /տրանսպարանտ/ միջոցով, բացառությամբ համապետական համաքաղաքային նշանակության միջոցառումների ազդարարման նպատակով կարճաժամկետ տեղադրման դեպքերի։»։

4. Հավելվածի 42-րդ կետը խմբագրել նոր հետևյալ բովանդակությամբ՝ «Էլեկտրոնային էկրաններ կարող են տեղադրվել շենքերի տանիքներին, շենքերի պատերի խուլ հատվածներին, վերգետնյա անցումների վրա, ճանապարհների կենտրոնական բաժանարար գոտիներում և խաչմերուկներում:

Էկրանային /վերարտադրող/ սարքավորումների մակերեսը որոշվում է էկրանի վերարտադրվող պատկերի մակերեսով։

Էլեկտրոնային էկրանների տեղադրման համար սահմանվում են հետևյալ չափորոշիչները՝

ա) «Էլեկտրոնային էկրանի որևէ հատված չի կարող գտնվել ճանապարհի երթևեկելի մասի վրա, բացառությամբ վերգետնյա անցումների վրա տեղադրված էլեկտրոնային էկրանների:

բ) Յուրաքանչյուր խաչմերուկում չի կարող տեղադրվել 1-ից ավելի էլեկտրոնային վահանակ:

գ) Ցանկացած չափի էլեկտրոնային էկրանների միջև հեռավորությունը չի կարող պակաս լինել 200 մետրից:

դ) Էլեկտրոնային էկրանի յուրաքանչյուր տեղադիրի համար Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի արտաքին ձևավորման և գովազդի վարչության կողմից սահմանվում են առանձին չափորոշիչներ կապված բարձրության և տեղեկատու դաշտի մակերեսի հետ, որոնք հաշվի են առնում տվյալ տարածքի ճարտարապետական առանձնահատկությունները։»։

5. Որոշման 2-րդ կետով հաստատված հավելվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 45.1-րդ կետով.

«45.1. Շենք–շինությունների ճակատային հատվածների վրա թույլատրելի գովազդի տեղադիրը, չափը, գունային լուծումը և գովազդի պատրաստման համար օգտագործվող նյութերն որոշվում են համաձայն՝ Երևանի քաղաքապետի կողմից հաստատված սխեմայի։»։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 18–Ի N 37-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

1. Փաստաթղթային շրջանառության գործառույթների շարժի ուսումնասիրման արդյունքում անհրաժեշտություն է առաջացել խթանել Երևան քաղաքի տարբեր վարչական շրջաններում գովազդային գործունեություն իրականացնող գովազդակիրների կողմից ներկայացվող ուրվանկարների համաձայնեցման գործընթացը և հնարավորություն ընձեռել նույն գովազդային ուրվանկարը տարբեր վարչական շրջանների միջոցով Երևանի քաղաքապետարանի համաձայնեցմանը ներկայացնելու փոխարեն անմիջապես այն ներկայացնել Երևանի քաղաքապետարան, իսկ համաձայնեցված ուրվանկարների պատճենները՝ տեղադրման թույլտվության տրամադրման նպատակով ներկայացնել համապատասխան վարչական շրջանի ղեկավարին։

Փոփոխության արդյունքում հնարավոր կլինի ապահովել՝

ա) գովազդային գործունեությամբ զբաղվող կազմակերպությունների ժամանակի խնայողություն և հարմարավետություն ուրվանկարների համաձայնեցման գործընթացում,

բ) վարչության կողմից ընթացիկ վերահսկողության արդյունավետության բարձրացում։

2. Ձգապաստառները՝ որպես հանրության իրազեկման տեղեկատվական միջոց, ոչ կիրառելի են դարձել, քանի որ սահմանափակում են փողոցների վերին հատվածի տարածական ընկալումը, շենքերի ճակատներից ամրացված լինելու դեպքում վնասում են շենքի ճակատային քարե շարվածքը, էլեկտրասյուներից ամրացված լինելու դեպքում՝ առագաստի էֆեկտի ազդեցության տակ ճկվում և ոչ անվտանգ են դարձնում սյուների երաշխիքային սպասարկումը։

Ձգապաստառները որպես գովազդային կրիչ մաշված են և կիրառելի են միայն կարճաժամկետ տեղադրման համար քաղաքային կամ պետական միջոցառումների իրազեկման համար։

3. Քանի որ նախկինում էլեկտրոնային էկրանների տեղադրման համար տրվել էին ընդհանրական չափորոշիչներ՝ հավասարեցվելով ստատիկ գովազդի հետ, այժմ սահմանվել են նոր չափորոշիչներ էլեկտրոնային էկրանների համար, հաշվի առնելով դրանց տեխնիկա–տնտեսական բնութագիրը։

Նոր չափորոշիչները հնարավորություն կտան.

ա) ճանապարհային երթևեկության մասնակիցներին անվտանգ տեղաշարժվել,

բ) հաշվի առնելով էլեկտրոնային կրիչների գունային պատկերների ակնթարթային փոփոխման հնարավորությունները, կլինեն միմյանցից բավարար հեռավորության վրա,

գ) ներդաշնակ կլինի միջավայրի ծավալատարածական ճարտարապետական լուծումներին,

Նախապես ունենալով յուրաքանչյուր փողոցի համար ճակատային փռվածքի գովազդային առաջարկի սխեմա, որտեղ հստակ կտրվի գովազդային թույլատրելի չափերը, տեղադիրները, օգտագործվող նյութերը և հնարավորության դեպքում՝

գունային լուծումները, արդյունքում տնտեսվարողների համար կհստակեցվեն աշխատանքային փոխհարաբերությունները և կվերանան սուբյեկտիվ պահանջները։

Աշխատանքների կանոնակարգմանը զուգահեռ ակնկալվում է նաև Երևան քաղաքի արտաքին տեսքի էական բարելավում և գովազդային վահանակների տեղադրման կանոնակարգում։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 18–Ի N 37-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի նոյեմբերի 18-ի N37-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջացնում։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 18–Ի N 37-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի նոյեմբերի 18-ի N37-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի եկամուտներում և ծախսերում էական փոփոխություններ չեն սպասվում։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ